

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ARB/19/1

STATE PROCUREMENT CONTRACT
ON PROVIDING LEGAL ADVICE SERVICES

FOR STATE NEEDS

No ARB/19/1

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի **N 1 հավելվածում** նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով ոչ պատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի **N 1 հավելվածով** սահմանված պահանջներին:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Հավելված 1-ում սահմանված Տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված ծառայությունը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքում՝ այդ մասին անհապաղ գրավոր տեղեկացնել Կատարողին:

2.2.2 Ծառայությունն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի **N 1 հավելվածով** սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.1.1. To check, any time, the course and quality of the Services provided by the Executor, without intervening in activities of the latter:

2.1.2. Where Services not complying with the Technical Specification in **Annex No 1** are provided:

(a) Not to accept the Services, prescribing a reasonable time limit at his/her discretion for gratuitous substitution of the Services of improper quality with Services complying with the Contract;

(b) To refuse to perform the Contract and request to return the amount paid for the service;

2.1.3. To unilaterally rescind the Contract, where the Executor has substantially violated the Contract. Violation of the Contract by the Executor shall be deemed to be substantial, where the Services provided substantially fail to comply with the requirements prescribed by **Annex No 1** to the Contract.

2.2. The Client shall be obliged:

2.2.1. To discuss and accept the Services provided in compliance with Technical Specification in **Annex No 1**, and in case of detecting shortcomings as a result of the Services — immediately inform the Executor thereon in writing.

2.2.2. To pay — in case of accepting the Services — the Executor the fees payable to the latter.

2.3. The Executor shall have the right:

2.3.1. To request from the Client to pay the amounts payable to it.

2.4. The Executor shall be obliged:

2.4.1. To ensure provision of the Services under the conditions prescribed, by **Annex No 1** to the Contract, governed by the existing legislation.

2.4.2. In case of commencing a process of liquidation or bankruptcy during the term of validity of Contract performance security, to inform the Client thereon in advance in writing.

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է ամսական կտրվածքով՝ Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստն արձանագրվում է Պատվիրատուի և Կատարողի միջև

3. PROCEDURE FOR DELIVERY AND ACCEPTANCE OF THE SERVICES

3.1. The provided Services shall be accepted on a monthly basis by signing a Delivery and Acceptance Protocol between the Client and the Executor. The fact of delivering the Services to the Client shall be recorded through a document mutually approved by the Client and

երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստն արձանագրող փաստաթուղթը (հավելված N2.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 (երկու) օրինակ (հավելված N2): Հանձնման-ընդունման արձանագրությանը կից ներկայացվում է յուրաքանչյուր պատասխանատու անձի կողմից կատարված վճարման ենթակա բոլոր առաջադրանքների բաշխվածքը՝ նշելով վճարման ենթակա յուրաքանչյուր առաջադրանքի ամսաթիվը և կիրառելի ժամադրույքը:

Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից սահմանված կարգով հաշվառվելու մասին Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի հոդված 7.1-ում նախատեսված կարգով տեղեկանալուց հետո, Կատարողն իր առաջին հաշիվ-ապրանքագիրը ներկայացնում է հանձնման-ընդունման արձանագրության ձևով՝ ներառելով 2019 թվականի մարտի 12-ից մինչև առաջին հաշիվ-ապրանքագրի ամսաթիվը մատուցված բոլոր ծառայությունները: Այնուհետև, Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում է հաշիվ-ապրանքագրեր՝ ամսական պարբերականությամբ:

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները:

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված) **30 (երեսուն)** աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

the Executor, indicating the date of drawing up the document.

The Executor shall provide the Client with the document recording the fact of transfer of the Services signed thereby (**Annex N 2.1**) and **2 (two)** copies of an invoice in the form of the Delivery and Acceptance Protocol (**Annex N 2**). The Delivery and Acceptance Protocol shall be accompanied by a breakdown of all billable tasks performed by each timekeeper, and specify the date of each billable task and the applicable hourly billing rate.

The Executor shall issue its first invoice, in the form of a Delivery and Acceptance Protocol, covering all Services rendered as from 12 March 2019 until the date of the first invoice, after the Executor is informed by the Client of the record-registration of the Contract by the Ministry of Finance of the Republic of Armenia pursuant to Article 7.1 of this Contract. Thereafter, the Executor shall issue invoices to the Client for its Services on a monthly basis.

3.2. The Delivery and Acceptance Protocol shall be signed, where the provided Services complies with the terms of the Contract. Otherwise, the results of performance of the Contract or a part thereof shall not be accepted, the Delivery and Acceptance Protocol shall not be signed and the Client shall:

- (a) undertake measures provided for by the Contract for such situation to regulate the issue;
- (b) apply measures of liability provided for by the Contract against the Executor.

3.3. The Client shall, within **30 (thirty)** working days counted from the working day following the day of receipt of the Delivery and Acceptance Protocol, submit to the Executor one copy of the Delivery and Acceptance Protocol signed thereby or the reasoned rejection for not accepting the Services.

3.4. Where the Client does not accept the provided Services or does not reject acceptance thereof within the period prescribed by point 3.3 of the Contract, the provided Services shall be deemed to be accepted, and the Client shall provide to the Executor — on the working day following the deadline prescribed by point

3.3 of the Contract — the Delivery and Acceptance Protocol approved by the Client.

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4. CONTRACT PRICE

4.1 Սույն պայմանագրի հոդված 4.2-ում սահմանված գնի սահմաններում՝ սույն պայմանագրի ներքո մատուցված ծառայության համար վճարը հաշվարկվում է հետևյալ կարգով.

4.1 Subject to Article 4.2 below, the Executor's fees for Services provided under this Contract shall be calculated:

4.1.1. Կատարողի կողմից մատուցված ծառայության համար հետևյալ ժամադրույքներով՝
(ա) գործընկերներ՝ 600 ԱՄՆ դոլար
(բ) փաստաբաններ՝ 450 ԱՄՆ դոլար
(գ) իրավաբաններ՝ 350-ից մինչև 400 ԱՄՆ դոլար՝ կախված ավագության աստիճանից
(դ) ուսուցանվողներ/ և իրավաբանի օգնականներ՝ 175 ԱՄՆ դոլար

4.1.1. For Services performed by the Executor, based on the following hourly rates:

- (a) Partners: USD 600;
- (b) Counsel: USD 450;
- (c) Associates: USD 350 to USD 400, depending on seniority;
- (d) Trainees and paralegals: USD 175.

4.1.2. Հայաստանի Հանրապետությունում գործող տեղական փաստաբանների (այսուհետ՝ տեղական փաստաբան) կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարը հաշվարկվում է հետևյալ ժամադրույքներով՝
(ա) գործընկերներ՝ 350-ից մինչև 400 ԱՄՆ դոլար՝ կախված ավագության աստիճանից
(բ) իրավաբաններ՝ 150-ից մինչև 250 ԱՄՆ դոլար՝ կախված ավագության աստիճանից:

4.1.2. For Services performed by local counsel in the Republic of Armenia (hereinafter "Local Counsel") shall be calculated based on the following hourly rates:

- (a) Partners: USD 350 to USD 400, depending on seniority;
- (b) Associates: USD 150 to USD 250, depending on seniority.

4.2. Կատարողի կողմից մատուցման ենթակա ծառայության առավելագույն ընդհանուր գինը կազմում է **1.300.000 (մեկ միլիոն երեք հարյուր հազար) ԱՄՆ դոլար**, իսկ Կատարողի վճարները կազմում են՝

4.2. The maximum total price of the Services to be provided by the Executor amounts to **USD 1.300.000 (one million and three hundred thousand US Dollars)**, and the Executor's fees for:

- (a) the first stage (Initial case assessment and preliminary procedural steps) shall not exceed USD 215.000 (two hundred and fifteen thousand US Dollars);
- (b) the second stage (Dispute board or mediation proceedings – if applicable) shall not exceed USD 150.000 (one hundred and fifty thousand US Dollars);
- (c) the third stage (Merits of Arbitration) shall be capped at USD 935.000 (nine hundred and thirty five thousand US Dollars).

ա) 1-ին փուլի համար (գործի նախնական գնահատում և նախնական ընթացակարգային գործողություններ)՝ 215.000 (երկու հարյուր տասնհինգ հազար) ԱՄՆ դոլար,
բ) 2-րդ փուլը (վեճը հաշտարարության կամ Dispute Board-ի միջոցով լուծելու դեպքում, եթե կիրառելի է)՝ 150.000 (հարյուր հիսուն հազար) ԱՄՆ դոլար,

գ) 3-րդ փուլը (արբիտրաժային վարույթի քննություն)՝ առավելագույնը 935.000 (ինը հարյուր երեսունհինգ հազար) ԱՄՆ դոլար:

4.2.1. Ծառայության մատուցումը վերոգրյալ 4.2 հոդվածի «ա»-ից «գ» կետերով նշված փուլերից մեկով ավարտվելու դեպքում, պայմանագրի գինը չի կարող գերազանցել տվյալ փուլի և դրան նախորդող որևէ փուլի (փուլերի) համար նախատեսված սահմանաչափը:

4.2.1. In case the Services are concluded in the course of one of the stages set out in Article 4.2 (a) to (c) above, the price of the contract shall not exceed the cap stipulated for that stage and for any previous stage(s).

4.2.2. Եթե Կատարողի վճարը վերոգրյալ 4.2 հոդվածի «ա»-ից «գ» կետերով նախատեսված որևէ փուլի կիրառելի սահմանաչափից պակաս է, ապա կիրառելի սահմանաչափի մնացորդն ավելացվում է հաջորդ փուլի համար նախատեսված գումարին:

4.2.2. If the Executor's fees for any of the stages set out in Article 4.2(a) to (c) above do not reach the applicable cap, the balance of the applicable cap will be added to the cap for the next stage.

4.2.3. Ծառայության մատուցման համար սույն պայմանագրի հոդված 4.2-ում սահմանված առավելագույն վճարները կայուն են և Կատարողն ու Պատվիրատուն համապատասխանաբար իրավունք չունեն պահանջել ավելացնելու և նվազեցնելու այդ գինը:

4.2.3. The maximum fees for the Services set out in

4.3. Եթե կատարողը Պատվիրատուի ցուցումներով իրականացրել է հետագա փաստաբանական և իրավաբանական ծառայություններ, որոնք ներառված չեն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի ծառայության շրջանակում (լրացուցիչ ծառայություն), այդ թվում՝ « տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և «Կորսան Կորվիամ Կոնստրուկցիոն» ընկերության միջև 2012 թվականի ապրիլի 27-ին կնքված Հայաստանի հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի վերակառուցման և բարելավման թիվ T1-T2-CW-01 պայմանագրի դադարեցման և «Կորսան Կորվիամ Կոնստրուկցիոն» ընկերության կողմից տրամադրված բանկային երաշխիքներով վճարում կատարելու Հայաստանի Հանրապետության պահանջների առնչությամբ, ապա Պատվիրատուն Կատարողի հաշիվ-ապրանքագրի հիման վրա կատարում է մատուցած լրացուցիչ ծառայությունների դիմաց վճարում:

4.4. Եթե տվյալ վեճի հետ կապված անհրաժեշտություն է առաջանում այլ երկրների դատական, արբիտրաժային վարույթներում ներկայացնելու Հայաստանի Հանրապետության շահերը (այդ թվում՝ Իսպանիայում երաշխիքների հետ կապված դատական գործընթացներում ներգրավման համար), ապա Կատարողը առաջարկություն է ներկայացնում կատարվելիք գործողությունների և ՀՀ շահերը ներկայացնելու համար ներգրավվող իրավաբանական ընկերության վերաբերյալ: Պատվիրատուի կողմից առաջարկն ընդունվելու դեպքում կատարվում է համապատասխան վճարում:

4.5. Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով՝ վճարման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված ԱՄՆ դոլար-ՀՀ դրամ փոխարժեքով, անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 3.2 և 3.3 հոդվածներով նախատեսված կարգով Կատարողին տրամադրելու ամսաթվից հետո 30 օրվա ընթացքում,

4.6 Սույն պայմանագրի հոդված 4.1-ում սահմանված ժամադրույքները և հոդված 4.2-ում սահմանված առավելագույն գները ներառում են Կատարողի և տեղական եթախորհրդատուի կողմից կատարվող բոլոր ծախսերը, բացառությամբ՝

- (ա) ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկեր, տուրքեր և այլ վճարներ՝ ներառյալ Կատարողի կողմից տեղական ենթախորհրդատուին կատարվող վճարների մասով,
- (բ) հաղորդակցության ծախսեր,
- (գ) գործուղման և գիշերակացի ծախսեր, և

Article 4.2 above are stable and the Executor and Client are not entitled to require respectively increasing and decreasing that price.

4.3.If the Executor has, performed – upon the Client’s instructions – further legal advice services beyond the scope of the Services defined in the Technical Specification in Annex No 1 to the Contract (hereinafter “the Additional Services”), including in respect of the termination of Contract T1-T2-CW-01 for Reconstruction and improvement of the North-South Corridor of Armenia dated 27 April 2012 signed by the Ministry of Transport, Communication and Information Technologies of Republic of Armenia and Corsan Corviam Construcccion S.A., and in respect of the Republic of Armenia’s demands for payment under the bank guarantees provided by Corsan Corviam Construcccion S.A, then the Client base on record-registration of the Executor, pays for the additional services.

4.4. If there is a necessity to represent the Republic of Armenia in arbitration or judicial proceedings in other countries in relation to the dispute (including proceedings in Spanish courts for the execution of the guarantees), then the Executor submits a proposal on actions to be taken and the law firm representing the Republic of Armenia. If the Client accepts the offer, the payment is made.

4.5. The Client shall pay for the Services provided thereto in Armenian drams (AMD), calculated on the basis of the USD-AMD exchange rate published by the Central Bank of Armenia on the date each payment is made, in a non-cash form, by transferring the funds to the settlement account of the Executor. Transfer of monetary funds shall be made on the basis of the Delivery and Acceptance Protocol, within 30 days after the submission by the Client to the Executor of the signed Delivery and Acceptance Protocol pursuant to Articles 3.2 and 3.3 above.

4.6. The hourly rates set out in Article 4.1 above, and the maximum prices set out in Article 4.2 above, include expenses to be incurred by the Executor and Local Counsel, with the exception of:

- (a) taxes, duties and other payments prescribed by the legislation of the Republic of Armenia, including in respect of any payments by the Executor to Local

<p>(դ) փաստահավաք փաստաթղթերի թարգմանության ծախսեր արբիտրաժում:</p> <p>Սույն հոդվածի «բ»-ից «դ» կետերում նախատեսված ծախսերը պետք է նախապես հաստատվեն ՀՀ արդարադատության նախարարության կողմից:</p> <p>Արբիտրաժային գործով փորձագետների վարձատրության, նրանց կողմից կատարված ծախսերի փոխհատուցման, վկաների, ինչպես նաև արբիտրաժի հետ կապված բոլոր ծախսերը՝ ներառյալ վճարները և արբիտրաժային տրիբունալի ծախսերը, կրում է ՀՀ արդարադատության նախարարությունը և ուղղակիորեն վճարվում են նրա կողմից: Այդպիսի վարձատրությունը և ծախսերը չեն ներառվում ծառայության համար Կատարողի վճարների սույն պայմանագրի հոդված 4.2-ում սահմանված առավելագույն գումարների հաշվարկում:</p>	<p>Counsel;</p> <p>(b) communication expenses;</p> <p>(c) travel and accommodation expenses; and</p> <p>(d) translation of fact-finding documents in the Arbitration.</p> <p>The expenses in (b) to (d) must be approved in advance by the Ministry of Justice of the Republic of Armenia.</p> <p>The Ministry of Justice of the Republic of Armenia shall bear and pay directly the remuneration and expenses of any experts and witnesses, and all costs of the Arbitration, including the fees and expenses of the arbitral tribunal. Such remuneration and expenses are not covered by the maximum amounts referred to in Article 4.2 above for the Executor's fees for the Services.</p>
<p>5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ</p>	<p>5. LIABILITY OF PARTIES</p>
<p>5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում պայմանագրի պահանջների պահպանման համար:</p> <p>5.2 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:</p>	<p>5.1. The Executor shall be held liable for observing the requirements of the Contract.</p> <p>5.2. In cases not provided for by the Contract, the Parties shall — for non-performance or improper performance of obligations thereof — be held liable as prescribed by the legislation of the Republic of Armenia.</p>
<p>6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍՄԱՃՈՐ)</p>	<p>6. FORCE MAJEURE</p>
<p>Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ նախն նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:</p>	<p>In case of failure to fully or partially fulfil the obligations envisaged by this Contract and the agreements concluded based on this Contract, the Parties shall be exempt from liability, where it occurred due to force majeure which arose following the conclusion of this Contract and which the Parties could not have foreseen or prevent. Such situations shall be earthquake, flood, fire, war, declaring martial law and state of emergency, political disturbances, strikes, termination of the operation of communication means, the acts of the state bodies etc., that make impossible the fulfilment of the obligations assumed under this Contract. Where the effect of the force majeure lasts for more than 3 (three) months, each of the Parties shall have the right to rescind the Contract by informing in advance the other Party thereon.</p>
<p>7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ</p>	<p>7. OTHER CONDITIONS</p>
<p>7.1 Պայմանագիրն ունի հետադարձ ուժ և տարածվում է 12.03.2019թ-ից սկսած Կողմերի միջև պայմանագրի</p>	<p>7.1. The Contract shall have retroactive effect and shall extend to the relations having arisen between</p>

հետ կապված հարաբերությունների վրա: Ընդ որում Կատարողի կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարումն իրականացվում է միայն Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից սահմանված կարգով հաշվառվելու դեպքում:

Պատվիրատուն անհապաղ ծանուցում և Կատարողին է տրամադրում պայմանագրի հաշվառման ապացույց:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման: Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.5 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները

the Parties connected to the Contract starting from 12 March 2019. Moreover, payment for the Services provided by the Executor shall be carried out only in case of record-registration of the Contract by the Ministry of Finance of the Republic of Armenia under the prescribed procedure. The Client shall immediately notify the Executor and provide proof of such record-registration of the Contract.

7.2. The payment obligation of the Party having arisen from the Contract may not terminate with the offset of a counter-obligation having arisen from another contract without the written consent of the parties confirmed with a seal. The right of claim having arisen from the Contract may not be transferred to another person without the written consent of the debtor party.

7.3. Where as a result of control or supervision over compliance with the requirements of the Law or as a result of examination of the appeals as prescribed by law it is concluded that in the procurement process, prior to the conclusion of the Contract, the Executor had submitted false documents (information and data) or the decision on declaring him or her a selected bidder does not comply with the legislation of the Republic of Armenia, the Client shall — upon the emergence of these grounds — be entitled to unilaterally rescind the Contract where pursuant to the legislation of the Republic of Armenia on procurement the detected deficiencies, having emerged prior to the conclusion of the Contract, would have constituted a ground for not concluding the Contract. Moreover, the Client shall not bear the risk of losses or lost profit of the Executor as a result of unilateral rescission of the Contract, and the latter shall be obliged to compensate for the losses suffered by the Client through his or her fault as prescribed by the law of the Republic of Armenia and to the extent to which the Contract has been rescinded.

7.4. Amendments and supplements may be made to the Contract only upon mutual consent of the Parties by way of conclusion of an agreement that will become the inseparable part of the Contract.

It shall be prohibited to make modifications to the Contract and where the contract price is factor-based — also to any agreement attached to the Contract concluded in the subsequent years, which result in the artificial change of the volumes of the Services to be procured or the unit price of the Services to be acquired or the contract price. Each case of modification to the Contract under the influence of factors not dependent on

(խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.7 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.8 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.9 Սույն պայմանագիրը կազմված է 24 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, , N 2 և N2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

the parties to the Contract shall be defined by the Government of the Republic of Armenia.

7.5. In case of proper performance of the Contract, the benefits (savings) or incurred damages of the Parties (Executor or Client) shall be deemed to be the benefit or incurred damage of the given Party.

The obligations of the Parties to the Contract with respect to third parties, including other transactions concluded by the Executor within the scope of performance of the Contract and the obligations resulting therefrom, shall be beyond the scope of the Contract and may not impact the acceptance of the result of performance of the Contract. The relations pertaining to such transactions and the obligations arising therefrom shall be regulated by the norms governing the relations pertaining to those transactions, and the Executor shall be liable for them.

7.6. The Contract may not be modified as a result of failure by the Parties to partially perform the obligations or may not be fully rescinded upon mutual consent of the parties, except for cases of reduction of financial allocations required for provision of Services as prescribed by the legislation of the Republic of Armenia. Moreover, mutual consent of the parties on failure by the parties to the Contract to partially perform the obligations or on full rescission needs to be obtained prior to reduction of the financial allocations required for provision of Services as prescribed by the legislation of the Republic of Armenia.

7.7. The notification on full or partial unilateral rescission of the Contract on the ground of non-performance or improper performance of the obligations assumed by the Executor shall be published by the Client at the section "Notifications on unilateral rescission of contracts" of the website at the following address: www.procurement.am, with the indication of the date of publication. The Executor shall be considered to be properly notified of unilateral rescission of the Contract from the day following publication of the notification made under the procedure specified in this point.

7.8. Disputes arising with regard to the Contract shall be settled through negotiations. In case of failure to reach an agreement, the disputes shall be settled in the courts of the Republic of Armenia.

7.9. This Contract is composed of 24 pages, it is concluded in two copies of equal legal effect. Annexes No N 1, N 2 and N 2.1 to this Contract shall be integral part of the Contract, each Party shall be provided with one


copy of the Contract.
7.10. The applicable law for this Contract shall be that of the Republic of Armenia.


8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ
ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8. ADDRESSES, BANK DETAILS AND SIGNATURES
OF PARTIES

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ արդարադատության նախարարություն Բ. Երևան,
Վ.Սարգսյան 3/8
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական
վարչություն
Հ/Հ՝ 900011021194
ՀՎՀՀ՝ 02506264


CLIENT
Ministry of Justice of the Republic of Armenia 3/8 V.
Sargsyan, Yerevan
Operations Department of the Ministry of Finance of
the Republic of Armenia
No 900011021194
TIN 02506264



/ստորագրություն/
Կ.Տ


(signature)
Seal

ԿԱՏԱՐՈՂ
LALIVE միջազգային ընկերություն
Stampfenbachplatz 4, P.O. Box 212,
8042 Zurich, Switzerland
Բանկային հաշիվ : LALIVE SA
Բանկ : CREDIT SUISSE AG – 1211 GENEVE 70
IBAN : CH10 0483 5157 6988 2200 1
SWIFT : CRESCHZZ80A

EXECUTOR
LALIVE SA
Stampfenbachplatz 4, P.O. Box 212,
8042 Zurich, Switzerland
Bank account name : LALIVE SA
Bank : CREDIT SUISSE AG – 1211 GENEVE 70
IBAN : CH10 0483 5157 6988 2200 1
SWIFT : CRESCHZZ80A


/ստորագրություն/
Կ.Տ


(signature)
Seal

LALIVE SA
35, rue de la Mairie - CP 6569
CH - 1211 GENEVE 6
Tél. 058 105 20 00 - Fax 058 105 20 60

LALIVE SA
35, rue de la Mairie - CP 6569
CH - 1211 GENEVE 6
Tél. 058 105 20 00 - Fax 058 105 20 60

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

«« դրամ

Ծառայության							
հրավեր ով նախատ եսված չափաբ աժնի համարը	գնումնե րի պլանով նախատ եսված միջանց իկ ծածկագ իրը՝ ըստ ԳՄԱ դասակ արգմա ն (CPV)	Փաստաբանական և իրավաբանական ծառայություններ	չա փմ ան մի ավ որը	ընդհա նուր գինը/ ԱՄՆ դոլար	ը ն դ հ ա ն ո ւ ր ք ա ն ա կ ը	Մատուցման	
						հասցեն	Ժամկետը

«Արմենսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և «Կորսան Կորվիան Կոնստրուկցիոն» ընկերության միջև 2012 թվականի ապրիլի 27-ին կնքված Հայաստանի հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի վերակառուցման և բարելավման թիվ T1-T2-CW-01 պայմանագրի համաձայն «Կորսան Կորվիան Կոնստրուկցիոն» ընկերության կողմից ՄԱՄԱԻՀ (UNCITRAL) արբիտրաժային կանոնների ներքո 2019 թվականի հունվարի 24-ին հարուցված արբիտրաժային գործով «Արմենսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության ներկայացրած ըստ հետևյալ երեք փուլերի՝

ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ- Գործի նախնական գնահատում և նախնական ընթացակարգային գործողություններ ա) գործի նախնական գնահատում և դիմումի պատասխանի նախապատրաստում:

Կատարման ենթակա գործողությունները ընդգրկում են հայցադիմումի ուսումնասիրությունը, Հայաստանի Հանրապետության կառավարության հետ հաղորդակցությունը, լրացուցիչ փաստաթղթերի հավաքագրումը և ուսումնասիրությունը, իրավական հետազոտությունների իրականացումը և հայցադիմումի պատասխանի նախապատրաստումը, գործը հաշտարարության կամ Dispute Board-ի միջոցով կարգավորելու հնարավորության շուրջ դիմողի հետ բանակցությունների վարումը:

բ) Արբիտրաժային տրիբունալի ձևավորում և նախնական ընթացակարգային գործողություններ

Կատարման ենթակա գործողությունները ընդգրկում են Հայաստանի Հանրապետության կողմից ընտրվող արբիտրի և նախագահողի ընտրության հետ կապված գործողությունները, վարույթի և ժամանակացույցի վերաբերյալ հաղորդակցությունը Արբիտրաժային տրիբունալի հետ:

ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ-Վեճը հաշտարարության կամ Dispute board-ի միջոցով լուծելու դեպքում

գ) կատարման ենթակա գործողությունները ընդգրկում են հաշտարարության հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերի մշակումը, փաստերի վերհանումը, իրավական հետազոտության իրականացումը, հաշտարարության ռազմավարության մշակումը և «-ի շահերի ներկայացումը:

ԵՐՐՈՐԴ ՓՈՒԼ-ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

դ. ՀՀ դիրքորոշման ձևավորումը.

Կատարման ենթակա գործողությունները ընդգրկում են դիմողի կողմից ներկայացվող բոլոր փաստաթղթերի ուսումնասիրությունը, պոտենցիալ վկաների հարցաքննությունը և ցուցմունքների նախապատրաստումը, փորձագետների հետ համագործակցությունը, նրանց եզրակացությունների վերանայումը, այլ փաստաթղթերի նույնականացումը, հավաքագրումը և ուսումնասիրությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանական դիրքորոշման նախապատրաստումը:

1 7914110 0/1

դրամ

Առավելագույնը 1.300.000 (մեկ միլիոն երեք հարյուր հազար) ԱՄՆ դոլար

1

Ֆրանսիա, ք. Փարիզ

12.03.2019-ից